



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հոկտեմբերի 2013 թվականի N 1194 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 29-Ի N 594-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» N 594-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ստուգումների կատարման արգելքը վերանում է ստուգում իրականացնող այն մարմինների համար, որոնց ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը և ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներն ընդունվել և ուժի մեջ են մտել օրենքով սահմանված կարգով:

Սույն կետում նշված մարմինների ցանկը սահմանվում է N 1 հավելվածով:».

2) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ կետով.

«4. Սահմանել, որ ստուգում սկսելուց առաջ ստուգում իրականացնող անձը տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձին կամ նրան փոխարինող անձին ծանոթացնում է ռիսկի վրա հիմնված համակարգի էությանը, ստուգաթերթերով ստուգումների մոտեցումներին, ստուգման բողոքարկման իրավունքներին և ընթացակարգերին, որի մասին տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձը կամ նրան փոխարինող անձն ստորագրում է N 2 հավելվածում ներկայացված հայտարարության օրինակելի ձևը:

Սույն կետում նշված ստուգաթերթերով ստուգումների մոտեցումների մասին ծանուցումը չի վերաբերում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1.1-ին կետում նշված հարկային և մաքսային մարմինների կողմից իրականացվող ստուգումների, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվող ստուգումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման համար իրականացվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության նկատմամբ հսկողությանը:».

3) որոշումը լրացնել NN 1 և 2 հավելվածներով՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2013 թ. նոյեմբերի 5
Երևան



Հավելված N 1
 ՀՀ կառավարության 2013 թվականի
 հոկտեմբերի 23-ի N 1194 - Ա որոշման

«Հավելված N 1
 ՀՀ կառավարության 2009 թվականի
 մայիսի 29-ի N 594 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՍՏՈՒԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ՉԻ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ
 ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ

Ստուգում իրականացնող մարմնի անվանումը	Ստուգում իրականացնող մարմնի ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթո- դաբանությունը և ստուգաթերթերը հաս- տատելու մասին ՀՀ կառավարության որոշման համարն ու ընդունման ամսաթիվը
1	2
ՀՀ արտակարգ իրավիճակների նախա- րարության աշխատակազմի հրդեհային և տեխնիկական անվտանգության պետական տեսչություն	ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 14-ի N 134-Ն և N 132-Ն որոշումներ
ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչություն	ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 6-ի N 598-Ն որոշում
ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1679-Ն, փետրվարի 28-ի N 338-Ն և սեպտեմբերի 5-ի N 970-Ն որոշումներ
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչություն	ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 6-ի N 1568-Ն և N 1569-Ն որոշումներ
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչություն	ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N 1511-Ն և 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1680-Ն որոշումներ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի տրանսպորտային պետական տեսչություն	ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1666-Ն և 2013 թվականի հունվարի 31-ի N 80-Ն որոշումներ

1	2
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության պետական տեսչություն	ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1852-Ն և 2012 թվականի հունվարի 12-ի N 18-Ն որոշումներ
ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչություն	ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 624-Ն որոշում
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի աուդիտորական գործունեության հսկողության պետական տեսչություն	ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 7-ի N 89-Ն և N 99-Ն որոշումներ
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչություն	ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 1562-Ն և 2013 թվականի մարտի 7-ի N 519-Ն որոշումներ

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2013 թվականի
հոկտեմբերի 23-ի N 1194 - Ա որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2009 թվականի
մայիսի 29-ի N 594 - Ա որոշման

Օրինակելի ձև

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՍՏՈՒԳՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ԾԱՆՈՒՑՎԱԾ
ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտնում եմ, որ ստուգում սկսելուց առաջ ստուգում իրականացնող մարմնի ներկայացուցչի կողմից ծանուցվել եմ ռիսկի վրա հիմնված համակարգի էությանը, ստուգաթերթերով ստուգումների մոտեցումներին, ստուգման բողոքարկման իրավունքներին և ընթացակարգերին, ինչի համար ստորագրում եմ:

ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏԻ
ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ԿԱՄ
ՆՐԱՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը)

_____ 201 թ.»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

